




## Աստղիկ Մկրտչի Սիմոնյան



**Ծննդյան վայրը, տարեթիվ** 1956թ., մարտի 29, ք. Լենինական

### **Կրթություն**

Միջնակարգ-մասնագիտական – Լենինականի մակավարժական ուսումնարան, նախադպրոցական բաժին 1977թ.

Բարձրագույն – Երևանի պետական մանկավարժական ինստիտուտ, մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությամբ 1985թ.

### **Գիտական աստիճան**

Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայի բաժին << տարիքային և մանկավարժական հոգեբանություն>> գծով հայցորդ՝ համաձայն 1986թ. Հոկտեմբերի 2, N88 հրամանի:

Հայցորդական երկամյա դպրոցն անցնելու ժամանակահատվածում հանձնել է նախատեսվող թեքնաձուական մինիմումները, սակայն գիտական ղեկավարի մահվան և չարաղետ երկրաշարժի պատճառով հետաձգվել են գիտական աշխատանքները՝ ձախողելով թեքնաձուական թեզի պաշտպանության գործընթացը:

### **Աշխատանքային փորձ**

Աղետի օրերին ընդգրկվել է հումանիտար օգնության խմբերում, հոգեբանական աջակցություն ցուցաբերելով արտակարգ իրավիճակում հայտնված ազգաբնակչությանը:

1989 թ. – ին աշխատել է ՀԿԿ Լենինականի մոսկովյան շրջկոմում, որպես հրահանգիչ, մինչև լուծարումը:



## «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

1991-1993թթ. Աշխատել է Լենինականի թ. 1 միջնակարգ դպրոցում, որպես հոգեբան՝ աշակերտական և ուսուցչական հանրույթի հետ հոգեվերականգնողական աշխատանքներում ձեռք բերելով մասնագիտական մեծ փորձ, գործնական հոգեբանին անհրաժեշտ հմտություններ, կարողություններ: Շարունակվել են գիտահետազոտական ընդհատված աշխատանքները: Կատարված ուսումնասիրությունների ու դիտարկումների հիման վրա գրվել են բազմաթիվ հոդվածներ:

Քաղժողկրթ բաժնի երաշխավորությամբ գործուղվել է Երևանի Պետական Համալսարանի պրակտիկ հոգեբանների պատրաստման և որակավորման մեկամյա, արտադրությունից կտրված դասընթացների: Գերազանցությամբ պաշտպանել է «Աղետից հետո դպրոցականների մոտ հանդիպող հոգեբանական պրոբլեմները և դրանց հոգեվերականգնողական աշխատանքների կազմակերպումը» թեմայով դիպլոմային աշխատանք, ստացել գործնական հոգեբանի որակավորում:

1993 թ. Վերադարձել է դպրոց, շարունակելով հոգեբանի գիտագործնական բնույթի աշխատանքները, համատեղությամբ անցել դասախոսական աշխատանքի «Պրոգրոես» ոչ պետական համալսարանում և Գյումրու Պետական Մանկավարժական Ինստիտուտի հոգեբանության ամբիոնում (Ժամավճարային):

Մանկավարժական ինստիտուտում անցել է հիմնական դասախոսական աշխատանքի՝ 0.5 դրուքով (համաձայն 1993 թ. դեկտեմբերի 3, N 71 հրամանի), համատեղ աշխատելով նաև դպրոցում: Ընդհանուր ծանրաբեռնվածությունը 1.5 դրույքի թույլատրելի սահմաններից անցնելու պատճառով ազատվել է դպրոցի հոգեբանի պաշտոնից և մինչև օրս աշխատում է Գյումրու Պետական Մանկավարժական ինստիտուտի հոգեբանության ամբիոնում որպես դասախոս:

### **Կարդացվող դասընթացներ**

Ընդհանուր, տարիքային և մանկավարժական մանկան հաղորդակցման հոգեբանություն, հոգեֆիզիոլոգիա, էթնոհոգեբանություն, հոգեբանության պրակտիկում ուսուցչի և հոգեբանի մասոնագիտական էթիկա:

### **Գիտական հետաքրքրությունների շրջանակը**



## «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Մասնակցել է Երևանի Մանկավարժության Գիտահետազոտական և Ուսուցիչների Կատարելագործման ինստիտուտների գիտական աշխատանքներին, հոգեվարականգնողական նպատակով անցկացվող գիտափորձերին:

Համագործակցել է հանրապետության տարբեր մարզերում և հատկապես Գյումրիում գործող գրեթե բոլոր հոգեբանական կենտրոնների հետ (MSF, MDM, Կարիտաս, ՀՕՄ, ՀՕՖ, <<Բժիշկներ առանց սահմանների>>, <<Հուստ փարոս>>, <<Արալեգ>>, <<Գորովանք>>, <<Օրբան>> և այլն), ուր և ձևավորվել ու զարգացել են հետազոտող – հոգեբանի մասնագիտական որակները:

Նյութեր է ուղարկել Հոռոմում կայացած կոնգրեսին. << Ճշմարտություն. Կարողանալ ոչ միայն ասել, այլ՝ լսել>> և <<Միրեցեք զմիմիանս>> թեմաներով:

Մասնակցել է <<Կրոն և հավատք>> միջքաղաքային մրցույթ – փառատոնին՝ նվիրված Մայրության և գեղեցկության վերաիմաստավորված տոնին:

Մասնագիտական անդամակցություն է ունեցել ՀԿ-ների, բարեգործական հիմնադրամների, երիտասարդական միությունների նիստերին, հավաքներին, << Սփյուռք – հայրենիք>> հայ-հունական բարեկամությանը նվիրված փառատոնին (կենտրոնը՝ Կիպրոս):

Անձնական նախաձեռնությամբ և սեփական միջոցներով հիմնադրել է << Գեղգեղիկ >> նախակրթարան – քոլեջը (2000-2004թթ.), որն ըստ ծրագրի և նպատակների (ֆինանսավորման հեռանկարների առկայության դեպքում) վերաճելու էր Հիշատակի Հիմնադրամ Կրթահամալիրի. <<Գեղգեղիկ>> - ը այդ կառույցի առաջին օղակն էր միայն, ուր ընդգրկված էին Անի թաղամասի սոցիալապես անապահով 14 ընտանիքների մանկապարտեզ չհաճախող երեխաներ, որոնց հետ անվճար հիմունքներով կրթադաստիարակչական և հոգեվերականգնողական աշխատանքներ:

Մասնակցել է աուտիզմով տառապող երեխաների և սահմանափակ կարողությունների տեր մարդկանց (տարեցներ) հետ տարվող հոգեշտկման աշխատանքներին, անցել Էրիկսոնյան հիպնոսի և ընտանեկան թերապիայի պրակտիկ կուրսերը (<<Ուրարտու>> և Հայաստանում Գերմանական համալսարաններ):

Համագործակցել է Տիրամայր Հայաստանի Կուսաստան, ՀՕՖ բարեգործական միջազգային կառույցների հետ, որպես հոգեբան հրավիրվել աշխատելու Ծաղկածորում և



## «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Եղեգնաձորում անցկացվող «Ամառային ճամբար» ծրագրերում, արժանացել պատվոգրերի և ֆինանսական խրախուսանքին:

### **Հրատարակության են պատրաստվում**

<< Պրոբլեմային դասախոսությունները բուհերում>>, <<Վախեցած երեխաների նշանասիմվոլային մտածողության առանձնահատկությունները>>, << Անձի հոգեբանական առանձնահատկությունների հաշվառման քարտ – սխեմայի ստեղծման գործառույթները>> թեմաներով հոդվածներ:

### **Օտար լեզուների իմացություն**

Ռուսերեն, անգլերն

### **Անձնական տվյալներ**

Ամուսնացած է, համարվում է ընտանիքի միակ կերակրողը, ունի 17 ամյա որդի,

Հեռ. 093 62 44 89

Էլ. Հասցե astxik.simonyan.56@mail.ru